թանձր ծուխը ցած է թողնում իր սեւ վարագոյրը, եւ եղերական տեսարանը անհետանում է մթութեան մէջ...

— Դու շատ զգայուն սիրտ ունես, — ասաց Ասլանը, երբ նշմարեց իմ արտասուքը: — Նստիր ձիդ, գնանք, հեռանանք, դեռ այդպիսի աւերակներ շատ կտեսնես...

Երբ ճանապարհ ընկանք, հեռոից տեսանք այդ կրակի ու կոտորածի հեղինակներից մէկին՝ ծերունի Օմար-աղային: Նա դեռ նստած էր իր խրճիթի կտուրի վրայ եւ արեւի ջերմ ճառագայթներով տաքացնում էր սառած մարմինը: Նա էլ նկատեց մեզ եւ, հեռոից գլուխն ու ձեռները շարժելով, բարի ճանապարհ մաղթեց:

Այնօր մենք անցանք Ոստանայ ամբողջ հովիտը: Ուր եւ գնում էինք, մեզ հանդիպում էին ամայի վանքեր, ամայի եկեղեցիներ եւ մենաւոր մատուռներ: Լեռները, ձորերը, անտառների խուլ, անմարդաբնակ խորքերը լի էին այդ սրբավայրերով: Ի՞նչ էր որոնում նրանց մէջ Ասլանը, ես չգիտեմ, միայն ինձ յայտնի էր, որ նա վանքերի շատ սիրահար չէր: Իլի գիւղում մենք տեսանք աստուածածնի «քառասուն խորանէ կոչուած վանքը: Գագիկ Արծրունին հիմնեց այդ մեծաշէն վանքը իր քառասուն հոյակապ տաճարներով: Նրանցից միայն մի քանիսն էին մնացել. միւսները կործանուել էին: Այստեղ դիմում էին հայոց ապաշխարողները եւ իրանց մեղքերի քաւութեան համար «քառասունք» էին կատարում, այսինքն՝ քառասուն տաճարների իւրաքանչիւրի մէջ մի-մի պատարագ էին մատուցանել տալիս, ի հարկէ, լաւ վճարելով վարդապետներին: Բայց ես հաւատացած էի, որ եթէ այդ վանքի քառասուն տաճարների իւրաքանչիւրի մէջ ամէն օր քառասուն անգամ պատարագ մատուցանէին, հազիւ կարող էին քաւել նրա հիմնողին այն մեծ մեղքից, որ նա կատարեց, ապստամբելով Բագրատունիների դէմ եւ Վասպուրականում իր համար մի նոր, հակաթոռ թագաւորութիւն հիմնելով: Դրանով անհնազանդ Արծրունին, արաբացոց տագնապի ժամանակ, երբ Հայաստանը աւելի մեծ զօրութեան պէտք ունէր, Բագրատունիների ուժը ջլատեց, իսկ իր հիմնած թագաւորութիւնը միայն մէկ դար կեանք ունեցաւ...

Ոստանայ հովտի մէջ, Արտոսի կողքի վրայ, կանգնած է մի այլ վանք եւ իր գեղեցկադիր, բարձրահայեաց դիրքով գրաւում է ճանապարհորդի ուշադրութիւնը: Նա «քառասուն-խորանիէ նման մեծաշէն, փարթամ եւ փառահեղ չէ, նա համեստ է եւ փոքրիկ: Բայց ամէն մի հայ չէ կարող՝ առանց նրա փոշիները համբուրելու՝ անցնել նրա մօտից, երբ գիտենայ, թէ ում գերեզմանն է դրած նրա անշուք տաճարում: Նրան կոչում են Չաղար (Չարահան) Ս. Նշանի վանք, որ շինուած է Ս. Աստուածածնի անունով: Մեծ ջերմե-